Ութերորդ հաղորդում

Համաբովանդակ Քրիստոսին՝ որպես համաբովանդակ կենդանարար Հոգու՝ Աստծու լիակատար ավետարանի համընդգրկուն օրհնության ամբողջության, ստանալու, փորձառաբար ապրելու և վայելելու ճանապարհը

Գրվածքների ընթերցում. Գղտ 1:15ա, 16ա, 2:20, 4:19, 3:14

I. Գաղատացիներին ուղղված թուղթը բացահայտում է, որ Աստծու ծրագիրն Իր բարեհաճության համաձայն հենց Իրեն՝ Քրիստոսին, մեր մեջ ներդնելն է. ըստ Գաղատացիներին ուղղված թղթի՝ ամենաչար բանը մարդկանց Քրիստոսից շեղելն է՝ Եփս 1:5, Գղտ 1:4-17, 2:20, 4:19, Օրհներգ 384:

II. Գաղատացիներին ուղղված թուղթը ներկայացնում է Քրիստոսին, ով եռակի սերմն է մարդկայնության մեջ, որպեսզի Աստված Իրեն բաշխի Քրիստոսի հավատացյալների մեջ Իր տնտեսության իրականացման համար՝ 3:16, Ծնդ 3:15, Գղտ 4:4, Ղկս 8:5ա, 11, Հվի 12:24.

Ա. Քրիստոսը՝ որպես կնոջ սերմը, ցույց է տալիս մարմնացած Քրիստոսին, ամբողջական Աստծուն, ով Իրեն մարդկության մեջ բաշխելու միջոցով կատարյալ մարդ դարձավ, որպեսզի ոչնչացնի Սատանային և Քրիստոսին հավատացողներին փրկի մեղքից ու մահից՝ Ծնդ 3:15, Եսյ 7:14, Մտթ 1:16, 20-21, 23, Գղտ 4:4, Հվի 1:1, 14, Եբր 2:14, Ա Կրթ 15:53-57:

Բ. Քրիստոսը՝ որպես Աբրահամի սերմը, երկրի վրայի բոլոր գերդաստաններն օրհնելու համար է. Աբրահամի եզակի սերմը՝ որպես վերջին Ադամը, դարձավ կենդանարար Հոգի, որն Աբրահամի օրհնությունն է (բարի երկրի իրականությունը) Իրեն Քրիստոսի հավատացյալների մեջ բաշխելու համար՝ նրանց Աբրահամի ընդհանրական սերմը դարձնելու նպատակով՝ Ծնդ 12:2-3, 7, 17:7-8, Գղտ 3:14, 16, 29, Հվի 14:17-20, Ա Կրթ 15:45բ, Հվի 12:24, Եսյ 53:10:

Գ. Քրիստոսը՝ որպես Դավթի սերմը, վերաբերում է հարուցանված Քրիստոսին, ով իրականացնում է Աստծու նորկտակարանյան տնտեսությունը՝ պատրաստված Եռամեկ Աստծուն Իր Մարմնի անդամների մեջ բաշխելու համար, որպեսզի նրանք կիսեն Իր թագավորական կարգավիճակն Իր հարության մեջ հավիտենական թագավորությունում՝ Բ Թգ 7:12-14ա, Մտթ 22:42-45, Հռմ 1:3, Հյտ 22:16, Գրծ 2:30-31, Մտթ 16:16-18, Հյտ 20:4, 6.

1. Մեծ լեռը՝ Աստծու թագավորությունը, որը լցնում է ամբողջ երկիրը Դնլ 2:34-35-ում, ընդհանրական եռակի սերմն է մարդկայնության մեջ, որը ներառում է Քրիստոսի բոլոր հավատացյալներին՝ հմմտ Մրկ 4:26:
2. Քրիստոսի՝ որպես մարդկայնության մեջ եղող եռակի սերմի շնորհիվ

թշնամիներն անհետանում են, օրհնությունը հայտնվում է, և մենք թագավորության մեջ ենք. սա ամբողջ Աստվածաշնչի հայտնությունն է:

III. Գաղատացիներին ուղղված թուղթը բացահայտում է համաբովանդակ Քրիստոսին՝ որպես համաբովանդակ կենդանարար Հոգու՝ Աստծու լիակատար ավետարանի համընդգրկուն օրհնության ամբողջության, ստանալու, փորձառաբար ապրելու և վայելելու ճանապարհը՝ 3:14.

Ա. Մենք ստանում, փորձառաբար ապրում և վայելում ենք համաբովանդակ Քրիստոսին՝ որպես համաբովանդակ կենդանարար Հոգու, այն բանի շնորհիվ, որ Աստված մեր մեջ բացահայտում է Քրիստոսին. մենք քրիստոնեական կյանքով ապրում ենք ըստ այն Քրիստոսի, որին տեսել ենք՝ 1:16ա, Եփս 1:17, Ծնդ 13:14-18, Եփս 3:8, 19.

1. Աստծուն ոչինչ այնքան չի հաճեցնում, որքան մեր մեջ Աստծու Որդու կենդանի անձի բացահայտումը՝ հայտնությունը՝ Գղտ 1:15ա, 16ա, Բ Կրթ 3:14-17, 4:3-6:
2. Որքան շատ Աստծու Որդու մասին ներքին, սուբյեկտիվ հայտնություն ստանանք, այնքան շատ Նա կապրի մեր մեջ. որքան շատ Նա ապրի մեր մեջ, այնքան շատ Նա մեզ համար կդառնա համաբովանդակ երկրի՝ որպես Աբրահամի օրհնության՝ համաբովանդակ կենդանարար Հոգու օրհնության իրականությունը՝ Գղտ 2:20, 3:14:
3. Եթե թողնենք մեր պատկերացումները, մեր սիրտը Տիրոջը շրջենք, ուշադրություն դարձնենք հոգուն և ժամանակ անցկացնենք Խոսքում հոգու մեջ ու աղոթքի մթնոլորտում, ապա Քրիստոսը կբացահայտվի մեր մեջ, կապրի մեր մեջ ու կձևավորվի մեր մեջ՝ 1:15ա, 16ա, 2:20, 4:19.
   ա. Մենք պետք է թողնենք մեր պատկերացումները. յուրաքանչյուր պատկերացում՝ հոգևոր լինի թե մսեղավոր, ծածկոց է. այս ներքին հայտնությունը տեղի է ունենում մեր հոգում մեր լուսավորված մտքի միջոցով՝ Բ Կրթ 3:14-15, 4:4, Եփս 1:17-18, Ղկս 24:45:
   բ. Մենք պետք է մեր սիրտը դարձնենք Տիրոջը. որքան շատ մեր սիրտը դարձնենք Տիրոջը, այնքան այս դարաշրջանի աստվածը քիչ հիմք կունենա մեր կյանքում ու մեր էության մեջ, և մենք կլինենք երկնային լույսի շողալու ներքո՝ այս կենդանի անձի մասին ներքին հայտնություն ստանալով՝ Բ Կրթ 3:16, 18:
   գ. Մենք պետք է հոգանք մեր հոգու համար և ուշադրություն դարձնենք մեր հոգուն. հենց մեր հոգում է Հոգին շողում՝ մեր մեջ բացահայտելով Քրիստոսին և մեզ հետ խոսելով Քրիստոսի մասին՝ Եփս 1:17, 3:5, հմմտ Հյտ 1:10, 2:7:
   դ. Մենք պետք է Խոսքն աղոթքաընթերցենք՝ Եփս 6:17-18:
4. Մենք պետք է լեցուն լինենք Աստծու Որդու հայտնությամբ ու դրանով իսկ նոր ստեղծագործությունը դառնանք, այնպես որ Քրիստոսն ապրի

մեր մեջ, ձևավորվի մեր մեջ, իսկ մենք մշտապես վայելենք Նրան՝ որպես համաբովանդակ Հոգու՝ Գղտ 6:14-15:

Բ. Մենք ստանում, փորձառաբար ապրում և վայելում ենք համաբովանդակ Քրիստոսին՝ որպես համաբովանդակ կենդանարար Հոգու, այն բանի շնորհիվ, որ Քրիստոսին ստանում ենք հավատքի լսելուց՝ Գղտ 3:2.

1. Հավատացյալների հավատքը Քրիստոսն է, որը մտնում է նրանց մեջ, որպեսզի դառնա նրանց հավատքը՝ նրանց հոգին հավատքի հոգի դարձնելով՝ Եբր 12:2ա, Գղտ 2:16, Հռմ 3:22, Բ Կրթ 4:13:
2. Հավատքը բխում է խոսքը լսելուց՝ Հռմ 10:17:
3. Հավատքը հավատալն է, որ Աստված է, իսկ մենք չենք. հավատքը միշտ վերացնում է մեզ և Քրիստոսին բացահայտում է մեզ համար՝ Եբր 11:6, Ծնդ 5:24, Հվի 8:58, Գղտ 2:20:
4. Հավատացյալները հավատքի ընտանիքի՝ տան, անդամներ են. հավատքի այս տունը Աստծուն Նրա խոսքի միջոցով հավատացող տունն է՝ 6:10:

Գ. Մենք ստանում, փորձառաբար ապրում և վայելում ենք համաբովանդակ Քրիստոսին՝ որպես համաբովանդակ կենդանարար Հոգու, այն բանի շնորհիվ, որ ծնվում ենք Հոգու համաձայն, և այն բանի շնորհիվ, որ մեզ մեր սրտերում տրվում է Աստծու Որդու Հոգին՝ 4:29բ, 6:

Դ. Մենք ստանում, փորձառաբար ապրում և վայելում ենք համաբովանդակ Քրիստոսին՝ որպես համաբովանդակ կենդանարար Հոգու, այն բանի շնորհիվ, որ հագնում ենք Քրիստոսին մկրտության միջոցով, որը մեզ զետեղում է Քրիստոսի մեջ՝ 3:27:

Ե. Մենք ստանում, փորձառաբար ապրում և վայելում ենք համաբովանդակ Քրիստոսին՝ որպես համաբովանդակ կենդանարար Հոգու, այն բանի շնորհիվ, որ նույնանում ենք Նրա հետ Նրա մահվան մեջ, որպեսզի այլևս ոչ թե մենք ապրենք, այլ Նա ապրի մեր մեջ. և այն կյանքը, որը հիմա ապրում ենք մսեղիում, Քրիստոսի հավատքի մեջ ենք ապրում՝ 2:20.

1. Քրիստոսի հետ նույնանալ նշանակում է Նրա հետ մեկ հոգի լինել և նույնիսկ Նրա հետ մեկ ամբողջություն լինել՝ Ա Կրթ 15:45բ, 6:17, Փլպ 1:20-21ա:
2. Մենք նույնանում ենք Քրիստոսի հետ Նրա մահվան մեջ, որպեսզի այլևս ոչ թե մենք ապրենք, այլ Քրիստոսն ապրի մեր մեջ՝ Հռմ 6:3-4, Գղտ 2:20:
3. Մենք այսպիսի կյանքով ապրում ենք Քրիստոսի՝ որպես մեր հավատքի մեջ. իսկական հավատքը Քրիստոսն Ինքն է, ով ներարկվում է մեր մեջ՝ դառնալով Իր հանդեպ մեր հիացմունքը՝ որպես արձագանք Իր գրավչությանը՝ խ. 20բ, Բ Կրթ 5:14-15, Եբր 12:2ա:

Զ. Մենք ստանում, փորձառաբար ապրում և վայելում ենք համաբովանդակ Քրիստոսին՝ որպես համաբովանդակ կենդանարար Հոգու, այն բանի շնորհիվ, որ ապրում ու քայլում ենք ըստ Հոգու՝ Գղտ 5:16, 25:

Է. Մենք ստանում, փորձառաբար ապրում և վայելում ենք համաբովանդակ Քրիստոսին՝ որպես համաբովանդակ կենդանարար Հոգու, այն բանի շնորհիվ, որ Քրիստոսը ձևավորվում է մեր մեջ երկունքի ցավերի միջոցով՝ 4:19:

Ը. Մենք ստանում, փորձառաբար ապրում և վայելում ենք համաբովանդակ Քրիստոսին՝ որպես համաբովանդակ կենդանարար Հոգու, այն բանի շնորհիվ, որ սերմանում ենք Հոգու համար Հոգու ցանկության և նպատակի ակնկալիքով՝ Հոգու ուզածն իրագործելով՝ 6:7-8:

Թ. Մենք ստանում, փորձառաբար ապրում և վայելում ենք համաբովանդակ Քրիստոսին՝ որպես համաբովանդակ կենդանարար Հոգու, այն բանի շնորհիվ, որ պարծենում ենք Քրիստոսի խաչով ու ապրում նոր ստեղծագործությունը՝ խխ. 14-15:

Ժ. Մենք ստանում, փորձառաբար ապրում և վայելում ենք համաբովանդակ Քրիստոսին՝ որպես համաբովանդակ կենդանարար Հոգու, մեր հոգու հետ Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքի շնորհիվ՝ խխ. 17-18:

© 2024 Living Stream Ministry